ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ԵՐԳԻԾԱՆԿԱՐՆԵՐԸ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ
karine.rafaelyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Դերենիկ Դեմիրճեանի արխիւը լի է տարատեսակ անտիպ նմուշներով, որոնց հանրայնացումը անհրաժեշտութիւն է թէ՛ Դեմիրճեանի, թէ՛ նրա արժէքը գիտակցող անձանց համար:

Անտիպների մասին խօսելիս մենք նկատի ունենք դասականի՝ ոչ միայն գրական երկերը, այլեւ գծանկարները, մասնաւորապէս՝ Դեմիրճեանի տարբեր տարիներին արած երգիծանկարները[1]:

Յայտնի է, որ Դեմիրճեանը դեռեւս Արտահանի դպրոցում ուսանելիս աչքի է ընկել կերպարուեստի եւ երաժշտութեան ոլորտներում ունեցած ձիրքերով, թէեւ, ինչ խօսք, դրանք էապէս զիջել են գրական օժտուածութեանը:

1892ին Գէորգեան ճեմարան ընդունուել պատրաստուող իրենց շրջանաւարտ սանին Արտահանի դպրոցի հոգաբարձութիւնը տալիս է հետեւեալ բնութագիրը.-

> Աշակերտ Դերենիկ Դեմիրճօղլեանը[2] ամենայն յաջողութեամբ եւ պարգեւատրութեամբ աւարտել է Հոգաբարձութեանս խնամոց յանձնած դպրոցը, ջանասէր է վերին աստիճանի, օժտուած է աստուածատուր բնածին ձիրքերով, ունի նախանձելի ընդունակութիւն եւ զարմանալի ձգտում դէպի կրթութիւնը եւ լուսաւորութիւնը: Թէ իր օրինակելի վարք ու բարքով, թէ իր համեստ բնաւորութեամբ, թէ իր բազմաթիւ նախանձելի յատկութիւններով միանգամայն գրաւել է թէ իր ուսուցիչների, թէ հոգաբարձութեան եւ թէ բոլոր հասարակութեան ուշադրութիւնը... Շնորհալի երգիչ է, նկարիչ, եթէ դատի տակ առնել նրա գրածները, ոտանաւորները, չենք սխալուի, որ նա ապագայում հայ գրականութեան մէջ լինելու է մի փայլուն աստղ[3]:

---

[1] Դեմիրճեանի երգիծանկարները պահպանւում են Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի Դերենիկ Դեմիրճեանի եւ Յուշային գրական ֆոնդերում, պատճէնները՝ Դեմիրճեանի տուն-թանգարանում:

[2] Դեմիրճեանի տոհմական ազգանունը եղել է Դեմիրճօղլեան: Յետագայում նա, իր ազգանունն աւելի բարեհունչ դարձնելու նպատակով, հրաժարուել է «օղլի» արմատից ու ստեղծագործութիւնների տակ, ինչպէս եւ գրքերը տպագրելիս հանդէս եկել Դեմիրճեան ազգանունով:

[3] Հրայր Մուրադեան, *Դերենիկ Դեմիրճեան*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 12:

Նկարչի եւ երաժշտի ձիրքերը չլքեցին գրող Դեմիրճեանին ողջ կեանքի ընթացքում: Նա նուագում էր ջութակ եւ նկարում մինչեւ կեանքի վերջը: Ուշագրաւ մի պատմութիւն կայ այն մասին, թէ ինչպէս է *Վարդանանքի* հեղինակը կտաւի վրայ, իւղաներկով պատկերել Աւարայրի ճակատամարտը[4]:

Ինչպէս գիտենք, *Վարդանանք* պատմավէպը գրուել է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Առաջին հատորը լոյս է տեսել 1943ին, երկրորդը՝ 1946ին: Երբ խորհրդային երկիրը փոքր-ինչ թօթափել է աղէտալի պատերազմի տնտեսական հետեւանքները, որոշուել է Դեմիրճեանի գլուխգործոցը վերահրատարակել պատշաճ տեսքով, նկարազարդումներով: Եւ 1951ին վերահրատարակուել է *Վարդանանքը*՝ մէկ գրքով[5]: Այն ամենաշքեղ հրատարակութիւնն է մինչ օրս եղածների մէջ: Գիրքը նկարազարդելու պետական պատուէրը տրուած էր այն ժամանակ երիտասարդ գեղանկարիչ Էդուարդ Իսաբէկեանին[6]: Դեմիրճեանը, նրան ուղղորդելու նպատակով, ինքն է նկարել Աւարայրի ճակատամարտը կտաւի վրայ: Ապա ցոյց է տուել իր նկարը Իսաբեկեանին եւ պահանջելու պէս առաջարկել, որ այդ ոճով ու ոգով նա անի իր վէպի նկարազարդումները: Այս մասին մեզ պատմել են գրողի եւ նկարչի ժամանակակիցները:

Փաստօրէն, ոչ միայն մանկութեան, պատանութեան, երիտասարդութեան, այլեւ խոր ծերութեան շրջանում էր նկարում Դեմիրճեանը: Եւ հենց այդ շրջանի գեղանկարչական գործերն են այսօր յայտնի հանրութեանը: Ոչ միայն «Աւարայրի ճակատամարտը» կտաւը, այլեւ շատ ուրիշ իւղաներկ աշխատանքներ եւ մատիտանկարներ Դեմիրճեանի տուն-թանգարանի ցուցադրութեան կարեւոր մասն են կազմում այսօր: Դրանց մէջ կան այնպիսիք, որոնք մինչեւ վերջերս անյայտ էին անգամ դեմիրճեանագէտ եւ դեմիրճեանասէր շրջանակներում: Այդ գործերը հիմնականում երգիծական բնոյթի մատիտանկարներ են, որոնք գրողն արել է թէ՛ առանձին թերթիկների վրայ, թէ՛ իր նամակների, ձեռագրերի էջերում: Դրանցից մի քանիսը եւս ներկայում համալրել են Դեմիրճեանի տուն-թանգարանի հիմնական ցուցադրութիւնը:

Գրեթէ բոլոր նկարներն ունեն որոշակի մեկնաբանութիւն-ենթագրութիւններ: Այդ նկարներում մենք հանդիպում ենք Դեմիրճեանի անուանի ժամանակակիցներին: Այս մասին նա գրում է նաեւ իր յուշերում:

---

[4] Գեղանկար՝ Դ. Դեմիրճեան, Աւարայրի ճակատամարտը, նիւթը՝ իւղաներկ, կտաւ, չափը՝ 65:0-27:0 սմ, 1943: Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի ֆոնդ, հաշուառման նիշ՝ ՄՄ-24:

[5] Դերենիկ Դեմիրճեան, *Վարդանանք*, Հայպետհրատ, Երեւան, 1951: Նկարազարդումը՝ Էդուարդ Իսաբեկեանի:

[6] Էդուարդ Իսաբեկեան (1914-2007), պատմանկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ:

Անդրադառնալով «Վերնատուն» գրական խմբակի[7] հաւաքներին՝ գրողը պատմում է.-

> Մենք սկսեցինք քննադատական վերաբերմունք ցոյց տալ մեզանից դուրս եղած գրականութեանը եւ քննադատութեանը: Ես զաւեշտական թերթիկներ էի կազմում յատուկ այդ երեկոյի համար, ուր երգիծանկարում էի զանազան անձնաւորութիւնների: Մի անգամից աւելի Լէօն դառել է իմ նկարների հերոսը[8]:

«Վերնատան» հաւաքները միտուած էին ոչ միայն գրական, մշակութային հարցերի քննութեանը, այլեւ հայ ազգի առջեւ ծառացած կենսական, ընկերաքաղաքական խնդիրներին: Հիմնադիրները մտահոգ էին ԺԹ. դարավերջի եւ Ի. դարսկզբի հասարակական, քաղաքական, աշխարհաքաղաքական փոփոխութիւններով, որոնք ուղղակիօրէն եւ դաժանօրէն ծառացել էին հայ ժողովդրի առաջ ու հերթական անգամ դրուած էր մեր ազգի լինել-չլինելու խնդիրը, ինչպէս, ցաւօք, այս օրերին:

Դերենիկ Դեմիրճեանը ոչ թէ սոսկ գծանկարում էր, այլեւ իր վերաբերմունքն էր արտայայտում այդ նկարներում իր ժամանակի անցուդարձերի առնչութեամբ: Նրա երգիծանկարներում զգացւում է որոշակի վերաբերմունք իր նկարների հերոսների հանդէպ: Բնականաբար, բանավէճերի պակաս չկար խորագէտ մտաւորականների քննարկումների ընթացքում: Միակարծիք չէին այդ վեցեակն ու նրանց հիւրերը՝ տիրող վտանգաւոր անցուդարձերի վերաբերմամբ: Դեմիրճեանը, որ դժգոհ էր այս կամ այն մտաւորականի կեցուածքից, այդ դժգոհութիւնն արտայայտել է նաեւ իբրեւ երգիծանկարիչ: Ինչ խօսք, նա իր տեսակէտերը յայտնել է նաեւ խօսքով, սակայն ասես դա բաւարար չհամարելով՝ նաեւ դիմել է գծանկարի ժանրին:

Նրա երգիծանքի թիրախում յաճախ յայտնուել է ժամանակի մամուլը, մասնաւորապէս՝ *Մուրճ*, *Մշակ* պարբերականները: Ինքն էլ, լինելով մամուլի աշխատակից, ներսից է իմացել, թէ ինչ անցուդարձեր կան խմբագրութիւնների պատերից ներս:

Չէ՞ որ մամուլը ժամանակի պատկերն արձանագրող հզօր միջոց է. եւ եթէ այն վատ է աշխատում, աղաւաղւում է ժամանակի պատկերն ու այն այդպէս աղաւաղուած էլ փոխանցւում է յետագայ սերունդներին, դառնում պատմութեան տուեալ ժամանակի ծուռ հայելին, խեղաթիւրում իրականութեան մասին պատկերացումները: Ահա այս մտածողութեանն ենք հանդիպում Դեմիրճեանի երգիծանկարներում: Դրանք, թերեւս, աւելի անաչառ եւ լիարժէք պատկերացում են տալիս մեզ այն օրերի մամուլի իրական նկարագրի մասին, քան դրանց պահպանուած համարները:

---

[7] Հիմնադիր վեց անդամներն էին՝ Յովհաննէս Թումանեան, Ղազարոս Աղայեան, Դերենիկ Դեմիրճեան, Աւետիք Իսահակեան, Լեւոն Շանթ, Նիկոլ Աղբալեան:

[8] Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի ժողովածու 14 հատորով, հտր. 14,* ՀՍՍՀ ԳԱ, 1987, Երեւան, էջ 247:

Երգիծանկարներից մէկում նաեւ նկատելի է Դեմիրճեանի ծաղրը օտարամոլութեան նկատմամբ: Խօսքը Ալեքսանդր Ծատուրեանին պատկերող երգիծանկարի մասին է մասնաւորապէս:

Իր համար սիրելի երկու անձանց՝ Թումանեանին եւ Պերճ Պռոշեանին նա ներկայացրել է անքէն ու հարազատական հումորով:

Մենք կը ներկայացնենք նրա տասնմէկ երգիծանկարները, որոնք որոշակի լոյս կը սփռեն Դեմիրճեանի նկարչական ձիրքի եւ գրական, հասարակական-քաղաքական դիրքորոշումների վրայ:

Երգիծանկարներին կցուած գրառումներում առկայ անընթեռնելի բառերի տեղում դրուած է <...> նշանը:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ԵՐԳԻԾԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՎԵՐԾԱՆՈՒԱԾ ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Երգիծանկար 1, Լէօ

Սա Լէոյին պատկերող երգիծանկարներից է, որին կցուած չէ Դեմիրճեանի որեւէ գրառում-մեկնաբանութիւն՝ ի տարբերութիւն յաջորդիւ ներկայացուողների:

Երգիծանկար 2, Լէօ

Այս երգիծանկարի հերոսը եւս Լէօն է: Նկարի տակ Դեմիրճեանը գրում է. «*Եւ այսպէս, Ռաֆֆին մեռաւ անժառանգ, թողնելով դրա տեղ էշեր, գայլեր ու արջեր, որոնք ոչ մի կապ չունեն գրականութեան հետ:*

Եւ այսպէս, պարոններ, վերջացնելով մեր խօսքը հին գրականութեան մասին, մենք կ'անցնենք (արջաբար) նոր գրականութեան:

Լէօ»:

Երգիծանկար 3, Ժամանակի մամուլ

Այս գծանկարում դասականի երգիծանքն ուղղուած է այն օրերի պարբերականներին եւ դրանց էջերում տպագրուող ու տպագրուել փափաքող հեղինակներին:

Նկարի ձախ կողմում երկու հոգու դիմանկար է՝ «*Մուրճ», «Մշակ*» գրութիւններով:

Դրանցից ներքեւ մի մարմնեղ զինուած մարդ է, հաւանաբար՝ *Մուրճ*ի խմբագիրը, քանի որ նրա սենեակի դռան զանգի կոճակը եզերուած է «Մուրճի խմբագիր» գրութեամբ: Խմբագրի թիկունքին կարծես գաղտնագրուած է «Լէօ»: Փակ դռան առջեւ շարուած են հեղինակները՝ համապատասխան գրութիւններով՝ «Պոէզի», «Վէպ», «Հասարակական գիտական», «Տնտեսական», «Մանկավարժութիւն»: Իսկ նկարի աջ անկիւնում մէջքով շրջուած մարդու ուրուագիծ է՝ «Հին մուրճ 2500» գրութեամբ:

Երգիծանկար 4, Ժամանակի մամուլ

Այս երգիծանկարում Դեմիրճեանի երգիծանքի թիրախը դարձեալ ժամանակի մամուլը եւ, իհարկէ, նրա ուշադրութեանն ամենաշատը արժանացած Լէօն են:

Մենք փորձել ենք վերծանել չափազանց մանր տառերով արուած նրա գրառումներն այս նկարի վրայ, սակայն ոչ բոլոր բառերն են ընթեռնելի:

Եւ այսպէս, ստորեւ ներկայացնում ենք վերծանուած ձեռագիրը:

«ՄՇԱԿ

Մեր ինտելիգենցիան ընկած է: Լէօ

ՄԱՄՈՒԼ

Բովանդակութիւն

Պէտք է առաջադիմել: Նամակ Երեւանից: Մտրակողական ուղղութիւն:

Մեր աղքատիկ գրականութիւնը: Մի պատասխան էր <...> - Լէօ:

Մի անանուն լրագրի դիմակը: Պատասխան պ. Լէօին- <...>:

Պատասխան Հ. <...>.- Լէօ: Բանասիրական: Հ. <...> նամակի առիթով - Լէօ:

Մանրանկար - վրձին:



Մեր ընթերցողներին

«Մշակ»ը այս տարի եւս մնում է իր հին ուղղութեանը հաւատարիմ: Այսինքն՝ դարձեալ կը լինի մտրակողական եւ ամէնքին ռոզգի[9] կը տայ. իսկ ով կը յանդգնի ծպտուն հանել նրա .... կը դաղի հրաշէկ կայծակներով: Իսկ ով կը համարձակուի բողոքել դրանից յետոյ, կը հրապարակուի պատերազմական պառոդիան, եւ մեզնից կը տրուի «Մանրանկարը»»:

Երգիծանկար 5, Պերճ Պռոշեան

Այս գծանկարում դասականի երգիծանքն ուղղուած է Պռոշեանի դէմ, որը նրա կրօնի ուսուցիչն էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում: Դեմիրճեանը Պռոշեանին «Հայրենախօս գրողը, լաւ մարդը» յուշագրութեան մէջ այսպես է բնութագրել. «*Ամենաբարի դասատուն էր նա. յաճախ էր շեղւում դասի առարկայից եւ հայրենասիրութեան մասին զրուցում. այնպէս որ՝ նրա աւանդած կրօնական առարկան մոռացուեց յետագայում, եւ մեր յիշողութեան մէջ մնացին հայոց պատմութիւնը եւ հայրենասիրութիւնը*»:

Եւ ահա, տարիներ անց Դեմիրճեանը այսպիսի երգիծանկարով է անդրադարձել իր ուսուցչին:

Այս նկարում յիշատակուած են Պռոշեանի երկերը՝ *Հացի խնդիր, Կռուածաղիկ, Շահէն, Բղդէ, Սօս եւ Վարդիթեր*: Գրուած են նաեւ երկու լատինատառ անուն՝ *Saco* եւ *ARTUR LEIST*:

---

[9] Մտրակ (ռուսերէն):

Ենթադրում ենք, որ առաջին անունն ակնարկում է *Հացի խնդիր* վէպի հանրայայտ հերոսին՝ Միկիտան Սաքոյին, մանաւանդ որ երգիծանկարի մէջ այդ վէպի վերնագիրը զբաղեցնում է զգալի տեղ:

Իսկ Արթուր Լիսթը (1852-1927) գերմանացի գրող է, թարգմանիչ, ապրել է Թիֆլիսում: Նա Պոօշեանի եւ Դեմիրճեանի ժամանակակիցն էր, յայտնի մարդ գրական միջավայրում: Գերմաներէն է թարգմանել հայ եւ վրացի դասականներին: Հաւանաբար, ինչ-որ առնչութիւն է ունեցել Պոօշեանի կամ գուցէ՝ Դեմիրճեանի հետ: Չի բացառւում, որ երգիծանկարելու պահին մասնակցել է «Վերնատան» հաւաքոյթին. չէ՞ որ խմբակի հիմնական կազմից բացի, Թումանեանի տանը լինում էին նաեւ ժամանակի այլ նշանաւոր դէմքեր՝ մշակոյթի եւ հասարակական-քաղաքական ոլորտներից:

Եւ Դեմիրճեանի թողած վկայութիւնն էլ համոզում է, որ համաշխարհային գրականութեանը, օտարալեզու գրքերին ծանօթանալը եղել է «Վերնատան» սկզբունքներից մէկը: «*Վերնատան» մասին շատ է գրուել, ճիշտը՝ յիշուել, եւ կարծեմ փորձեր էլ են եղել նաեւ մեկնաբանելու նրա էութիւնը:*- Գրել է Դեմիրճեանը.- *Պէտք է նշեմ, որ հեղհեղուկ բաներ ասուել են երբեմն: «Վերնատան» սկզբունքն էր՝ շարժում, դուրս գալու ազգային սահմանափակութիւնից, ժողովրդական ազգային կուլտուրա, համամարդկային գաղափարներ, համաշխարհային կլասիկա: Ստեղծել ժողովրդին մօտ գրականութիւն, որը պէտք է ունենայ նաեւ գեղարուեստական մշակում եւ կենդանի, գրաբարից զերծ լեզու*»[10]:

Բայց սա չի նշանակում, որ վերնատնականները տուրք են տուել օտարամոլութեանը եւ վերամբարձ մօտեցում ունեցել հայ ազգային մշակոյթին ու գրականութեանը: Ճիշտ հակառակը՝ այս միջավայրում խիստ քննադատութեան են ենթարկուել օտար արժէքներով չափից աւելի տարուելու երեւոյթները, եւ այս մասին լաւագոյնս վկայում է յաջորդ ծաղանկարը:

Երգիծանկար 6, Ալեքսանդր Ծատուրեան

Դեմիրճեանն այս երգիծանկարում անդրադարձել է Ալեքսանդր Ծատուրեանին: Ինչպէս յայտնի է Ծատուրեանի կենսագրութիւնից, 1902ից նա ապրել եւ աշխատել է Մոսկուայում, եղել ուսուցիչ մոսկովեան մեծահարուստների ընտանիքներում, ապա զբաղուել գրական-հրատարակչական գործունէութեամբ:

Երգիծանկարի հերոսներին, ինչպէս սովորաբար անում էր Դեմիրճեանը, կցուած են երգիծական գրութիւններ: Ներկայացնում ենք դրանք՝ վերից վար:

«Մոսկուայի համակրողներ

---

[10] Դերենիկ Դեմիրճեան, *Անծանօթ էջեր*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1974, էջ 289:

Բիւրակն
Գլուխներէն վեր պիտի որոնենք գեղեցիկ արուեստը
ՄՇԱԿ

Կոյսի մեջ գեղարուեստ չկայ, բայց նրա գլխարկի մէջ մեծ գեղարուեստագէտ կայ:

Հրաշալի գլխարկ, Ալեքս. Ծատուրեանի»:

«*1903ին ես գնացի Մոսկուա*,- կարդում ենք Դեմիրճեանի Թումանեանի հետ գրքում,- *այնտեղից վերադարձայ Թիֆլիս, ուր «Վերնատան» աշխատանքները շարունակեցինք, մանաւանդ, որ բաւական նիւթ կար: Վաղուց հրատարակուել էր «Երգերն ու վէրքերը», ես գրել էի «Կեանքի տեսիլը», Շանթն սկսել էր հետաքրքրուել դրամատուրգիայով, իսկ որ ամէնից գլխաւորն է՝ Թումանեանը հրատարակում էր իր «Բանաստեղծութիւնների» ստուար հատորը: Մեր գրական զրոյցների նիւթը մի փոքր փոխուել էր: Թումանեանը օրաւուր աւելի էր պնդում, որ պէտք է մօտենալ ժողովրդին: Պէտք է ունենալ իր սեփական ժողովրդի կապը*»[11]:

Կարծում ենք, որ 1902ից Մոսկուայում՝ մեծահարուստ ռուսների միջավայրում, իր գործունէութիւնը ծաւալած Ծատուրեանը եւ Դեմիրճեանը հանդիպել են այնտեղ, եւ խորաթափանց Դեմիրճեանը նկատել է Ծատուրեանի վարքագծում օտարամոլութեան անհարկի դրսեւորումներ, որն էլ դրդել է նրան անել այդ գծանկարը եւ մեկնաբանութիւններում արտայայտել ռուսամոլութեան հանդէպ իր վերաբերմունքը:

Երգիծանկար 7, Երգ երգոց

Դեմիրճեանի յուշերը «Վերնատան» հաւաքների մասին շատ սրտառուչ ու բովանդակալից են: Թէ՛ խմբակի անդամներին, թէ՛ դրա շուրջ համախմբուած անձանց Դեմիրճեանը նուիրել է բազմաթիւ, բազմաբնոյթ ստեղծագործութիւններ: «Վերնատան» ստեղծման մասին նրա յուշերում կարդում ենք.

> Թումանեանը ապրում էր հինգերորդ թէ վեցերորդ յարկում, Բեհբութեան փողոցի վերին մասերում, բուսաբանական լեռան ստորոտին: Այդ բարձր բնակարանի սենեակներից մինը մեր հաւաքատեղին էր եւ տեղի բարձրութեան պատճառով, նաեւ Քրիստոսի աշակերտների «Վերնատանը» հաւաքուելու եւ Սուրբ Հոգուց շնորհք ստանալու կատակով արած նմանութիւնը մէջ բերելով՝ կազմակերպութիւնը կոչեցինք «Վերնատուն»[12]:

Ինչպէս նկատում ենք, աստուածաշնչեան նիւթին անդրադարձը առկայ է անգամ խմբակի անուան մէջ, ուստի զարմանալի չէ, որ իր երգիծանկարներից մէկին դասականը հաղորդել է հոգեւոր բովանդակութիւն. պատկերել է իւրօրինակ կերպար, որն ակնյայտօրէն ուխտաւորի է նման: Նա ոտաբոբիկ է, ձեռքին՝ գառնուկ, ուսից վեր ուղղուած սլաքները, կրծքավանդակին, քթին պատկերուած շինութիւնները՝ եկեղեցու գմբէթ յի-

---

[11] Դերենիկ Դեմիրճեան, *Թումանեանի հետ*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1969, էջ 19:

[12] Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի ժողովածու 14 հատորով, հտր. 12*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1985, էջ 170:

շեցնող տանիքներով, ակնարկում են Թումանեանի տան՝ վերին յարկում, բարձունքի վրայ գտնուելու հանգամանքը: Նկարի մակագրութիւնը եւս աստուածաշնչեան է՝ «Երգ երգոց»: Թէ յատկապէս ու՛մ եւ ի՛նչ է նկատի ունեցել այս երգիծանկարում Դեմիրճեանը՝ միանշանակ պնդել հնարաւոր չէ, սակայն իւրաքանչիւրս կարող ենք զարկ տալ մեր երեւակայութեանն ու անել մեր սեփական եզրակացութիւնները:

Երգիծանկար 8, Յովհաննէս Թումանեան

Այս անգամ Դեմիրճեանը երգիծանկարել է Թումանեանին:

Երգիծանկարի վերեւում կայ այսպիսի գրառում. «*Հոգուս մէջ ահափե-սիլ ձեւեր դանդաղօրէն կը փարփամին ծուլութեան ճամփին վրայ... Ու ես կը փոկամ՝ ի քուն ընկղմած, գանգիս մէջ «Բլբուլն հազարան», որու թուղթն գնած պապրասփ է արդէն: Սպասեցէք, ո՛վ եղբայրներ, քնէս յոգ-նելէն եւ այդ յոգնութիւնն նորէն քնով հանգսփացնելէն եփքը... սակայն քունս կը փանի, ծառայութիւն*»:

Իսկ Թումանեանի երգիծանկարի շուրջ Դեմիրճեանը նկարել է նրա հերոսներին, նշել ստեղծագործութիւնների վերնագրերը, գրառում արել նաեւ քնած Թումանեանի վրայ գցուած ծածկոցի հատուածում: Ահա այդ գրառումների վերծանումը.

«Նոր գրուելիք եւ չգրած հին գրուող բաներ

Պոէտն ու մուսան

Դէպի անհունը

Լոռեցի Սաքօն

Թմբկաբերդը

Անուշ

Հազարան բլբուլը

Սասունցի Դաւիթ»:

Երգիծանկար 9, Յովհաննէս Թումանեան

Դեմիրճեանն այս երգիծանկարում, կարծում ենք, պատկերել է Թու-մանեանին: Այս եզրակացութեանն ենք եկել՝ հիմք ընդունելով Թուման-եանին պատկերող նրա նախորդ երգիծանկարը: Դրանցում պատկերուած կերպարը նոյնն է, ըստ մեզ:



Երգիծանկարը երկու մասից է բաղկացած: Վերին հատուածում Դեմիրճեանի երգիծանկարի հերոսը պառկած է խոտի բարձր դէզի վրայ: Հատուածը մակագրուած է այսպէս. «*Ախ Աստուծ, մէկին կու փաս սելով փետ,*' <…>»:

Ներքեւում հերոսը պառկած է կոշտ թախտի վրայ, մակագրութիւնն էլ շարունակութիւնն է վերեւում սկսուած մտքի. «*մէկին չես փալ ցախ, Աստուծ…*»:

Ահա այսպէս. Դեմիրճեանը շարունակում է կատակել:

Երգիծանկար 10, Նամակ Յովհաննէս Թումանեանին



Դեմիրճեանը, ինչպէս նշել ենք, նկարում էր ոչ միայն կտաւի կամ առանձին թերթիկների վրայ, այլեւ իր ստեղծագործութիւնների, նամակների էջերին: Ասուածի մի վկայութիւն է վերեւում ներկայացուող նիւթը՝ Թումանեանին ուղղուած նամակը:

Այս անթուակիր նամակը Դեմիրճեանը Թումանեանին գրել է Սանահինից: Նամակը տպագրուած չէ ո՛չ Դեմիրճեանի, ո՛չ էլ Թումանեանի երկերի ժողովածուներում:

Դեմիրճեանը Սանահին էր մեկնել կազդուրուելու:

Ինքն իրեն նկարելով սարերի գլխին՝ բնաձայնական վանկարկումներով դիմում է Թումանեանին՝ տեղեկացնելով, թէ ինքը նրա ծննդավայրում է եւ բարձր սարերի գագաթից ողջոյն է յղում Թումանեանին, նրա կնոջը՝ Օլիային, երեխաներին:

Նամակի բովանդակութիւնը՝ ստորեւ:

«Օհաննէ՛ս, ա՛յ տղայ,
(հ) ռա՛ւել տու,
(յ) ռա՛ւել տու
ա՛յ տղայ
ռաւել տու,
հա՛յ, հա՛յ, հա՛յ հ ա՛ա՛ա՛ա՛
ա՛ ա՛ ա՛ ա՛ յ...
(այ քու տունը քանդուի ոչ),
բարեւ արա Օլիայի՛ն,
երեխեքա՛նց, է՛յ, հէ՛, է՛ , էյ՛,
ես էլ ըստի եմ, Սա՛նահին,
Սա՛նահին, Սա՛նահին...
այ հա՛յ, հա՛ա՛յ
ա՛ա՛...յ
(Դերենիկ)»:

Երգիծանկար 11, Նամակ Աւետիք Իսահակեանին

Ահա եւս մի երգիծական գծանկար, աւելի ճիշտ՝ երգիծական մակագրութիւն ունեցող գծանկար՝ արուած նամակի մէջ:

Այս գծանկարը 1898 Մարտի 15ին Թիֆլիսից Իսահակեանին գրած նամակում է: Նամակը, իհարկէ հրատարակուած է[13], սակայն նամակի վերջին էջում արուած գծանկարն ու մակագրութիւնը անյայտ են լայն հանրութեանը, եւ այն միայն կարող են տեսած լինել Դեմիրճեանի տուն-թանգարան այցելած մարդիկ:

Սաղարթազուրկ ծառի եւ լճակի գծապատկերի տակ Դեմիրճեանը գրել է. «Այվազովսկին եթէ սաղ է, կարող է հանգիստ գերեզման մտնել, իսկ եթէ գերեզմանում է՝ կարող է հանգիստ շուռ գալ միւս կողքին»:

Նշենք, որ Յովհաննէս Այվազովսկին մահացել է 1900ին: Այսինքն՝ այս գծանկարն անելու ժամանակ նա ողջ էր:

Ինքնին հասկանալի է, որ Դեմիրճեանի երգիծանքն այս դէպքում ուղղուած է հենց իրեն, եւ ոչ՝ Այվազովսկուն: Նա ինքնահեգնանքով նկատել է իր նկարած փոքրիկ լճակի եւ Այվազովսկու շքեղ ծովանկարների տարբերութիւնն ու նկարի մակագրութեամբ խոստովանել իր նկարչական ձիրքի խեղճութիւնը մեծ ծովանկարչի տաղանդի համեմատութեամբ: Զարման-

[13] Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի ժողովածու 14 հատորով, հտր. 14*, էջ 293-96:

ալի չէ, որ մեծ գրողը տեսել եւ հասկացել է իր նկարչական ձիրքի անկատարութիւնը եւ չի վախեցել խոստովանել դա այսպիսի հակասական մեկնաբանութեամբ, որը ոչ-խորաքնին ընթերցողին կարող է թուալ յանդգնութիւն Այվազավսկու հեղինակութեան, տաղանդի հանդէպ, այնինչ իրականութիւնը բոլորովին այլ է. այն պէտք է տեսնել Դեմիրճեանի գրի տողատակերում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս յօդուածը հնարաւորութիւն է տալիս ճանաչելու Դերենիկ Դեմիրճեանին նոր տեսանկիւնից եւ հասկանալու, թէ որքան խորաթափանց, բազմաշնորհ անհատականութիւն է եղել նա: Իւրաքանչիւր տաղանդաւոր գրող չէ, որ իր գրական երկերից զատ, նաեւ աչքի է ընկել արուեստի այլ ոլորտներում, փայլել ոչ միայն գրական, այլեւ ուրիշ ձիրքերով: Դեմիրճեանն այս իմաստով բացառութիւն էր: Նրա կերպարուեստը, որ մասնակիօրէն ներկայացուեց այս ուսումնասիրութեան մէջ, ասուածի խօսուն վկայութիւնն է: Ասել է թէ՝ մեծերի կեանքն ու ստեղծագործութիւնն ուսումնասիրող մասնագէտներին միշտ էլ սպասում են անակնկալներ, որոնց բացայայտման համար երբեմն բաւական չեն տասնեակ հարիւրաւոր տարիները: Վերջին տարիներին մեզ յաջողուել է Դեմիրճեանի արխիւում գտնել նման անակնկալների մի ամբողջ շարք, որը գուցէ եւ դեռ սպառուած չէ, եւ անակնկալները դեռ կարող են լինել շարունակական:

THE CARICATURES OF DERENIK DEMIRCHIAN
(SUMMARY)

KARINE RAFAYELYAN
karine.rafaelyan@mail.ru

The archival legacy of the renowned Armenian novelist Derenik Demirchian is full of samples of diverse unpublished documents. These include not only his literary works but also the drawings he made during his lifetime.

The current article highlights Demirchian's hitherto unpublished eleven pencil drawings, which are caricatures. Most of these caricatures are done on separate papers, while others are drawn either on the manuscript pages or the letters of the author. Almost all the drawings have write-ups by Demirchian, which sound more like comments and explanations.

In fact, Demirchian was not only caricaturing but also expressing his views and attitude towards the figures he was drawing. Furthermore, these comments, about the renowned figures he was drawing, reflect as well events of the time. The set of caricatures published in this article belong to Hovhannes Toumanian, Leo, Berdj Broshian, Alexander Dzadourian, Hovhannes Aivazovsky, and the most famous Armenian periodicals of the time, specifically *Mourdj* (hammer) and *Meshag* (peasant, cultivator)

These eleven caricatures shed light on Demirchian's drawing talent and his literary and socio-political position concerning a number of critical issues of the time. It helps us to see Demirchian from a different, unexamined perspective and to recognise how deep and piercing a multitalented personality he was.

In this regard, Demirchian is a rare case as very few Armenian writers have been able to produce wonderful literary works (the *Vartanank* novel in his case) as well as shine with other talents.